



Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ֆրանսերենի՝ որպես 3-րդ օտար լեզվի ուսուցման
մոտիվացիայի բացակայության պատճառներն ավագ դպրոցում և
դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

Հետազոտող ուսուցիչ՝ Սաթենիկ Մովսիսյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ՄԱՍ I.....	5
ՄԱՍ II.....	14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	19
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	20

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գիտնականները եկել են այն եզրահանգման, որ տեղեկատվական համակարգչային տեխնոլոգիաների ստեղծմամբ մարդկությունը վերջին ընդամենը 20-30 տարիներին կատարել է այնպիսի թռիչք, որն իր կարևորությամբ և ընձեռած հնարավորություններով հավասար է մինչ այդ մարդկության անցած ՈՂՋ ճանապարհի ձեռքբերումներին:

Կարո՞ղ եք պատկերացնել՝ կշեռքի մի նժարին դրված են, օրինակ, անիվի գյուտը, գրերի ստեղծումը, արդյունաբերական հեղափոխությունը, գենետիկայի բացահայտումները և բազմաթիվ այլ՝ արդեն սովորական դարձած հայտնագործություններ ու նվաճումներ, իսկ մյուսին՝ համակարգիչն ու Համացանցը՝ իրենց անձայրածիր հնարավորություններով:

Իր **ԹՅՈՒԿՆԵՐԸ ՀՍԿԱՆԵՐԻ ՈՒՍԵՐԻՆ. ԱՐՅԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ** գեկուցման մեջ կանադացի գրող և էսսեիստ **Օլիվյե Դայենսը**¹ շեշտում է, որ նոր տեխնոլոգիաների դարաշրջանում մենք պետք է փոխենք մեր կյանքը, մեր հասարակությունը և կրթությունն իրականացնելու ձևերը: Որովհետև, եթե մինչև վերջերս ուսուցչին էր տրված գիտելիքի տարածման մենաշնորհը, ապա այժմ՝ արհեստական բանականության շնորհիվ (պատճառո՞վ) ամեն ինչ փոխվել է:

Պատմաբան **Յուլիա Նոա Հարարիի** կարծիքն այն մասին, որ ԱՅՍՕՐ երիտասարդների սովորած գիտելիքը ՀՆԱՅԱԾ է համարվելու արդեն 2050-ին, չի վիճարկվում: Դրանով է,գուցե, բացատրվում այսօրվա դպրոցի կարևորագույն խնդիրներից մեկը՝ աշակերտները մեծամասամբ ուսման չեն ձգտում:

Իմ աշխատանքում ես փորձել եմ պարզել հատկապես ավագ դպրոցում 3-րդ օտար լեզվի ուսումնառության շատ թույլ մոտիվացիայի պատճառները և առաջարկել այդ

¹ <https://knowledgeone.ca/4-challenges-for-education-in-the-digital-revolution-era/?lang=fr>

խոչընդոտի վերացման մի քանի հնարավոր լուծում: Իրատեսական լուծումներից առաջինը, ըստ իս, ուսուցման համար անհրաժեշտ ԳՐԱՎԻՉ և ՀԱՃԵԼԻ միջավայրի ստեղծումն է, որն ասելով հասկանում եմ՝ առավելագույնը 12-13 սովորող,

Ֆրանսերենին հատկացված կաբինետ՝ գոնե նվազագույն անհրաժեշտ տեխնիկայով, չափորոշիչներին համապատասխանող մեթոդ-դասագիրք (ցանկալի է ոչ պատճենահանված): Դասարանի հետ աշխատանքը պետք է կազմակերպել միայն սովորողների կարիքների և սպասելիքների բազմակողմանի վերլուծությունից հետո: Դասավանդող ուսուցիչը մեթոդների ողջ ներկայակնակը պետք է կիրառի՝ մոտիվացիան արթուն պահելու համար:

Սովորողներին համոզելն ու ապացուցելը, որ 3-րդ օտար լեզվի դասավանդումը ավագ դպրոցում ՄԻԱՆԳԱՄԱՅՆ արդարացված է և ծառայում է իրենց իսկ ապագայի կերտմանը, արդիական բարդագույն խնդիր է : Եվ դա ևս, կրթության բնագավառում առկա այլ նորոյա խնդիրների կողքին, պահանջում է մեծագույն ջանքեր ուսուցիչներից, ծնողներից և համակարգի պատասխանատուներից:

Մ Ա Ս Ի

Մարդկային գործունեության ցանկացած տեսակ, նույնիսկ այնպիսիք, որոնց տրվում ենք, քանի որ այլ բան չունենք անելու, կամ պարզապես մեզ հաճույք պատճառելու համար, ունեն իրենց պատճառները և իրենց նպատակները: Այս տեսակետից կարող ենք համարել, որ սովորելը՝ ցանկացած տարիքում, բնական բան է, և որ որևէ օտար լեզու սովորելը հատուկ բացատրություն չի պահանջում: Այլ է, իհարկե, երբ առանձին անհատներ կամ հաստատություններ ծանրակշիռ պատճառներ պետք է ունենան օտար լեզվի ուսուցումը ձեռնարկելու և կազմակերպելու համար, որովհետև դա պահանջում է ամենատարբեր բնույթի ներդրումներ: Ի դեպ, մնացած դեպքերում էլ հարկ է հստակեցնել դրդապատճառներն ու նպատակները՝ իրենց նախաձեռնության առաջընթացը վերահսկելու և շեղումներից խուսափելու համար: Օտար լեզուների դասավանդման ընթացքում հանդիպող խնդիրներից շատերը վերագրվում են օգտագործված մեթոդներին, սակայն իրականում դրանց պատճառները թաքնված են մոտիվացիայի, սպասելիքների և վերջնարդյունքների ընկալման և կառավարման մեջ: Եթե ուզում ենք միասին ճանապարհորդել, ապա երթուղին քննարկելուց առաջ հարկավոր է պայմանավորվել և որոշել՝ որ կետից և դեպի որ կետն ենք գնալու: Օտար լեզուների ուսուցման որոշ մեթոդներ շեշտը դնում են այն բանի վրա, որ անհրաժեշտ է հստակեցնել, խթանել, հարկ եղած դեպքում ՍՏԵՂԾԵԼ անձնական մոտիվացիաներ՝ լեզվի ուսուցման մեջ հաջողության հասնելու համար:

Այսպիսով. օտար լեզվի ուսուցման կազմակերպումը անհրաժեշտաբար պետք է սկսել՝ հստակ ուսումնասիրելով սովորողների մոտիվացիաները (պատճառները և նպատակները՝ սոցիոմշակութային, դպրոցական, մասնագիտական): Մոտիվացիայով են պայմանավորված սովորողի սպասելիքները և կարիքները՝ գիտելիքներ և հմտություններ: Դասընթացի կազմակերպումը ևս բխում է դրդապատճառներից և

Նպատակ ունի հասնելու վերջնարդյունքին, որը կարող է արտահայտվել գնահատման տեսքով:

Նախևառաջ հարկ են համարում անդրադառնալ դպրոցում որևէ առարկա սովորելու մոտիվացիային առհասարակ: Խնդրի կարևորությունը առավել հստակ պատկերացնելու համար հարցում են անցկացրել վերապատրաստվող ուսուցիչների մեր խմբում (Կոչոյան կրթահամալիր, ԵՊՊԹ, №154, №83, №175, №4 դպրոցներ, Յրագրանի Վիլյամ Սարոյանի անվան դպրոց, Մ. Աբեղյանի անվան ՅՃՇԱՅ հենակետային ավագ դպրոց №3) և դպրոցում, որտեղ դասավանդում են: Դասարանների ներկայակցելու լայն է՝ տարրական դասարաններ, 5-րդ, 7-րդ դասարան հիմնական դպրոցում և 10-12 դասարաններ՝ ավագում:

Չարցերը 3-ն էին.

- Կարծում էք, որ ավագ դպրոցի աշակերտներն ունեն սովորելու մոտիվացիայի պակաս:
- Ո՞րն է դրա հիմնական պատճառը (նշել միայն 1 պատճառ):
- Ի՞նչ լուծումներ եք առաջարկում:

Չարցմանը մասնակցած 30 ուսուցիչների 100%-ը հաստատել է ,որ խնդիրը գոյություն ունի:

Որպես պատճառ, հարցման մասնակիցները նշել են

- հեռանկարի և նպատակների բացակայությունը (55%)
- 12-ամյա կրթության աննպատակ լինելը (25%)
- ավագ դպրոցի պարագայում դպրոցը և, հետևաբար , նաև միջավայրը փոխելու պարտադրանքը (10%)
- կյանքից կտրված և ոչ իրատեսական նյութերի հիման վրա կառուցված դասերը դասագրքերում (5%)
- հնացած ուսման մեխանիզմները (5%)

Պատճառների ընտրությունը, ըստ ուսուցիչների, արտահայտում է նաև այս հարցի վերաբերյալ սովորողների կարծիքները, քանի որ խնդիրն բխվել են հաճախ և փորձել են քննարկել սաների հետ:

Հնարավոր լուծումները, ըստ հարցման մասնակիցների, ենթադրում են բոլոր «շահառուների» մասնակցությունը:

- ստեղծել գրավիչ աշխատատեղեր
- անձնական օրինակով առաջացնել մոտիվացիա սովորողի համար
- բացատրական աշխատանք տանել և համագործակցել սովորողի ծնողների հետ
- վերադառնալ 10-ամյա կրթական համակարգին և խորհրդային տարիների մանկավարժական մեթոդներին
- տանել անհատական բացատրական աշխատանք՝ ըստ սովորողի կարիքների
- մշակել իրատեսական չափորոշիչներ
- կիրառել նոր և բազմազան ուսումնական նյութեր
- վերանայել ուսման մեխանիզմները և դասարանային համակարգը
- մշակել և ստեղծել գրավիչ դասագրքեր
- նվազեցնել դասարաններում սովորողների թիվը
- բոլոր դպրոցները հագեցնել նոր տեխնոլոգիաների կիրառումն ապահովող սարքավորումներով
- նպաստել ուսուցչի՝ գիտելիք կրողի կերպարի վերադարձին

Ինչպես կարելի է տեսնել՝ առաջարկվող լուծումները բազմազան են՝ իրատեսական և ոչ այնքան, մասնավոր խնդրի կամ համակարգին վերաբերող: Իսկ խնդրի առկայությունը՝ անվիճելի փաստ, որը, եթե ավելի լայն դիտարկենք, կարելի է համարել ԱՄԵՆԱՄԵՃ դժվարությունը դպրոցում դասավանդողների համար:

Բոլոր նշված պատճառները կիրառելի են, իհակե, ֆրանսերենի՝ որպես 3-րդ օտար լեզու ավագ դպրոցում դասավանդման դեպքում նույնպես: Սակայն առանձնահատկություններ էլ կան: Եվ հարկ է դրանց անդրադառնալ:

Համաձայնեք, որ ֆրանսերենի ուսուցումը ավագ դպրոցում *ad initio*, այսինքն զրոյից, պահանջում է մեծ աշխատանք և քաջություն: Ֆրանսերենի՝ որպես 3-րդ օտար լեզու (FLES- *français langue étrangère seconde*) դիդակտիկայում կան բազում մեթոդներ, որոնք կոչված են օգնելու ուսուցչին՝ գտնելու ուսուցումն ավելի մոտիվացնող և արդյունավետ դարձնելու միջոցներ: Սակայն մոտեցման ընտրությունը բարդ է, քանի որ դասարանում սովորողները տարբերվում են իրենց հետաքրքրություններով, սովորելու

իրենց նախընտրած ձևերով և սովորելու իրենց ցանկությամբ: Ուսուցիչը կանգնած է մեծ մարտահրավերի առաջ, եթե ուզում է մոտիվացնել իր ԲՈԼՈՐ աշակերտներին: Այդտեղ միակ դերը ուսուցչինը չէ, շատ բան կախված է նաև աշակերտի դիրքորոշումից: Եվ ուրեմն հարցը պետք է դիտարկել և՛ ուսուցչի, և՛ աշակերտի տեսանկյունից:

Իսկ ի՞նչ է մոտիվացիան: Տարբեր բնորոշումներ կան: Ըստ որոշ մասնագետների՝ Գարդներ և Մաքինտայր, մոտիվացիան 3 բաղադրիչից կազմված բարդ կառույց է . նպատակին հասնելու ցանկություն, դրան ուղղված ջանքեր, բավարարվածություն այդ աշխատանքից: Gardner et MacIntyre (1993 : 2)

Մոտիվացիան կարող է լինել ինչպես պատճառ՝ ուսումնառության սկզբում, այնպես էլ արդյունք՝ ուսումնառության ավարտին: Առանձնապես չցանկանալով խորանալ մասնագիտական եզրույթների մեջ, կուզենայի այդուհանդերձ մի քիչ ավելի խորը վերլուծել 2-ը՝ ինտեգրված մոտիվացիա և գործիքային մոտիվացիա:

Առաջինը վերաբերում է անձի զարգացմանը և մշակութային հարստացմանը: Սովորողի նպատակն է ընդունվել թիրախային լեզվի մշակույթը կրողների կողմից, յուրատեսակ իդենտիֆիկացիա: Այս տիպի մոտիվացիան առաջանում է, երբ օտար լեզվի նկատմամբ նրա հետաքրքրությունը միշտ կա և արթուն է: Շատ գործոններ են ազդում ինտեգրված մոտիվացիայի վրա՝ սանի դիրքորոշումը, օտար լեզուն սովորելու հետաքրքրությունը և ցանկությունը: Այս գործոնները հաճախ կապված են ճանապարհորդությունների, ընկերային հարաբերությունների հետ և այլն: Ուժեղ ինտեգրված մոտիվացիա ունեցող աշակերտն ավելի ակտիվ է դասարանում: Նա կիսատ չի թողնում լեզվի ուսուցման գործընթացը: Այս տիպի մոտիվացիա կարելի է արթնացնել սովորողների մեջ՝ նրանց դրդելով հաղորդակցվել: Նրանց առաջ պետք է դնել մարտահրավերներ՝ համարժեք ունեցած լեզվական մակարդակին՝ ոչ շատ հեշտ, ոչ շատ դժվար: Այստեղ ես գործի եմ դնում իմ մանկավարժական մեթոդների զինապահոցի երկու ՈՍԿԵ ԿԱՆՈՆՆԵՐԸ, հատկապես, երբ ուզում եմ զարգացնել սովորողների բանավոր խոսքի հմտությունները:

- Եթե ուզում ես խոսել օտար լեզվով, պետք է ԽՈՍԵՍ:

- Պետք է ասես ոչ թե այն, ինչ ՈԻԶՈԲՄ ես, այլ այն, ինչ ԿԱՐՈՂ ես: Դրա համար հարկավոր է հրաժարվել մայրենի լեզվի հարուստ բառապաշարը ֆրանսերենի վերածելու անհաջող փորձերից. դա իսպառ կվերացնի եղած մոտիվացիան:

Երբեմն սովորողներն ընտրում և սովորում են օտար լեզուն ապագա կարիերայի, սոցիալական կարգավիճակի կամ պարզապես պահանջվող կրթական մակարդակին հասնելու համար (գործիքային մոտիվացիա): Մի դասարանում, որպես փորձ, մի խումբ աշակերտների պարգևներ են առաջարկել ըստ աշխատանքի արդյունքների, մյուսները նույնն արել են ուղղակի որպես դասարանային աշխատանք: Նրանք, ում պարգևներ են խոստացված եղել, ավելի բարձր արդյունքներ են ունեցել, քան մյուսները: Սակայն փորձը շարունակել են՝ հայտարարելով, որ պարգևներ այլևս չեն լինելու: Գործիքային մոտիվացիայի ազդեցությունը, ինչն էլ դիտարկվում էր, անհետացել է: Այստեղ էլ իմ ուսուցչի դերը կլինի օգտագործել ձեռք բերած նվաճումները և թույլ չտալ, որ կոնկրետ նպատակին հասնելուց հետո սովորողը կորցնի հետաքրքրությունը լեզվի նկատմամբ:

Օտար լեզվի ուսումնառության հարցում դժվար է հստակ բնորոշել՝ մոտիվացիան պետք է դիտարկել որպես պատճառ, թե՞ արդյունք, կամ գուցե երկուսն էլ: Մասնագետների մոտեցումները տարբեր են: Գարդները (1985) պնդում է, որ այն մեծ մասամբ պատճառ է, սակայն ընդունում է, որ ուսումնառության ընթացքում ինչ-որ դրական փորձառությունից հետո սովորողի դիրքորոշումը կարող է փոխվել: Դրան հակառակ, Սթրոնգը (1984) նշում է, որ օտար լեզու սովորելու ցանկությունը աշակերտի մեջ գերազանցապես պայմանավորված է ստացած արդյունքով:

Այսպիսով, մոտիվացիայի այս 2 տիպերի միջև գոյություն ունի ինտերակտիվ կապ: Ուժեղ մոտիվացիան անկասկած խթանիչ ուժ է ուսուցման համար, սակայն լեզվի ուսուցման գործընթացում ձեռք բերած հաջողությունները նպաստում են, որ այդ մոտիվացիան չմարի:

Հստակ տրված հարցին՝ ինչու՞ ես դու սովորում ֆրանսերեն, տարբեր պատասխաններ կարող են հնչել: Իմ դպրոցի սաները գրեթե նույն պատճառներն են նշում:

- Որովհետև լեզուն գեղեցիկ է, հարուստ, հետաքրքիր
- Որովհետև սիրում եմ երկիրը, բնակիչներին

- Որովհետև պարտավոր եմ կամ ստիպված եմ
- Որովհետև ուզում եմ դպրոցում լավ արդյունք ունենալ
- Որովհետև ընկերներս (արտասահմանում ապրող ազգականներս) խոսում են ֆրանսերեն
- Որովհետև մտադիր եմ ճամփորդել Ֆրանսիայով
- Որովհետև ինձ համար դա ինտելեկտի մարտահրավեր է
- Որովհետև ուսուցիչս լավն է, միջավայրը՝ հաճելի
- Որովհետև ուզում եմ աշխատանք գտնել 2 լեզվով
- Որովհետև ուզում եմ ֆրանսերենով կարդալ գրքեր և ամսագրեր

Եթե փորձենք վերլուծել FLES-ի ընտրության դրդապատճառները, կարող ենք դրանք դասակարգել հետևյալ խմբերի.

–Ուսուցանվող առարկային վերաբերող

Սրանք այն պատճառներն են, որոնք գործում են ուսումնառության հենց սկզբնական փուլում, կամ նախքան այն ձեռնարկելը: Դրսևորվում են լեզվի նկատմամբ ունեցած առանձնահատուկ հետաքրքրությամբ կամ, ավելի հաճախ, պայմանավորված են որոշ կարծրատիպերով՝ սիրո լեզու, նորաձևության և ապրելու արվեստի հիմնադիր երկիր և այլն: Որքան էլ տափակ և ծեծված թվան այս պատճառները, ուսուցիչը պարտավոր է կառչել դրանցից: Ոչ մի դեպքում չի կարելի այդ պահին փորձել փոխարինել դրանք ավելի ծանրակշիռ պատճառներով: Ուսուցման հետագա փուլերում միայն՝ ելնելով ձեռք բերած լեզվական մակարդակից, դասավանդողը կարող է սովորողի մոտ առաջացնել ավելի լուրջ և վստահելի մոտիվացիա: Անօգուտ ջանքեր են, իհարկե, փորձել մոտիվացիա առաջացնել բոլոր սովորողների մոտ միանգամից: Առաջին դասերի ժամանակ շատ ավելի կարևոր է աշխատել ՀԵՏԱԶՐԶՐՈՒԹՅՈՒՆ առաջացնել լեզվի նկատմամբ, քան ձգտել գիտելիք հրամցնել: Այդ նպատակով պետք է ընտրել հետաքրքիր, գրավիչ առաջադրանքներ՝ անընդհատ փոփոխելով դրանք: Հարկավոր է

բաց չթողնել պահը և օգտվել նորի գրավչությունից: Ամենակարևոր բանը, որ ուսուցիչը պետք է կարողանա անել՝ սովորեցնել՝ առանց ձանձրացնելու:

– Ուսուցման գործընթացին վերաբերող

Սրանք վերաբերում են հենց ուսումնառության զարգացմանը: Անհերքելի է, որ ոմանք ավելի շատ են սիրում սովորել, քան ուրիշները: Նրանք օգտվում են լեզվի ուսուցման ընձեռած հնարավորություններից, առիթներ են փնտրում նախաձեռնելու, ընդունում են մարտահրավերները, անձնական հաղթանակների հասնելիս բավարարված են զգում իրենց, այդ նպատակներին հասնելու համար տրամադրում են իրենց և դրսևորում համապատասխան վարքագիծ: Այս տեսակի մոտիվացիայով է պայմանավորված ուսումնառության ընթացքը, և ուսուցիչը պետք է ամեն օր խրախուսի սովորողի ջանքերը՝ առանց դրանք քննության կամ կիսամյակային աշխատանքի հետ կապելու: Կարևոր է հետևել, որպեսզի սովորողների ինքնազնահատականը լեզվի ուսուցման հարցում դրական լինի: Ամեն գնով պայքարել հոռետես մոտեցումների դեմ (ես լեզուներից թույլ եմ/ ուսուցիչը լավը չէ, այդ պատճառով մոտիվացված չեմ, ջանք չեմ թափում, չեմ առաջադիմում//ապացույց, որ ես օժտված չեմ լեզուներից/որ ուսուցիչը լավը չէ):

– Ուսուցման միջավայրով կամ այլ հանգամանքներով պայմանավորված

Այս տեսակի մոտիվացիաները էական դեր ունեն օտար լեզու առարկայի ուսուցման գործում՝ մարդկային գործոնի առանձնահատուկ կարևորությամբ պայմանավորված : Սովորողի հետաքրքրությունը լեզվի նկատմամբ մեծապես բացատրվում է այն պայմաններով, որոնցում ընթանում է ուսուցումը: Մասնավորապես, հարկավոր է, որ ուսուցիչը լինի բավականաչափ բարյացկամ, հարաբերությունները՝ ջերմ, մթնոլորտը՝ անբռնազբոս, որպեսզի սովորողները համարձակություն ունենան խոսելու, մասնակցելու, նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելու և այլն: Սա հենց այն պահն է, երբ պետք է հաճելին համատեղել օգտակարի հետ, հատկապես, որ մանկավարժական պրակտիկայում այն, ինչ հաճելի է, ի վերջո, միշտ էլ օգտակար է լինում: Ուսուցիչը, սակայն, չպետք է սահմանափակվի համակրելի կամ լավը լինելով: Իր մասնագիտական գիտելիքների վստահելիությունը, դասավանդման որակը, դասընթացի կազմակերպման ճիշտ ընտրված մեթոդները նույնքան կարևոր մոտիվացիոն գործոններ կարող են դառնալ սովորողների համար՝ ձգտելու ավելի բարձր արդյունքի:

Եվ վերջապես՝

– Ուսուցման արդյունքներով պայմանավորված

Սրանք, ցավոք, և՛ ուսուցիչների, և՛ աշակերտների կողմից ամենից հաճախ նշվող մոտիվացիաներն են. թեստ, քննություն, ավելի բարձր վարձատրվող աշխատանք և այլն: Ամենևին չցանկանալով նսեմացնել այս դրդապատճառների դերը սովորողներին մոտիվացնելու գործում, կուզենայի, սակայն, ակնկալել, որ մեր ուսուցիչները կդադարեն ամեն վայրկյան դրանցով «վախեցնել» աշակերտներին, որովհետև դա բերելու է կարճաժամկետ արդյունքի և երկարաժամկետ հուսալքման: Եթե քննության կամ թեստի անցկացման ժամկետները հեռու են, ապա սովորողին դա դեռ այնքան էլ չի հետաքրքրում, իսկ եթե մոտիկ, ապա դրանց ավարտից անմիջապես հետո մոտիվացիոն գործոնն անհետանում է:

Սահմանափակվելնք մոտիվացիայի տեսակների այս շատ համառոտ նկարագրությամբ : Ինչպես գործունեության այլ տեսակների դեպքում, ուսումնառության գործընթացում էլ չի կարելի հենվել մոտիվացիոն պատճառների միայն մեկ խմբի վրա : Դասավանդման ընթացքը տևական է, և ուսուցիչը պետք է ճիշտ օգտագործի սաների մոտիվացիան՝ ըստ փուլերի : Եթե պատկերավոր նկարագրելու լինեմ օտար լեզվի դասընթացը սկզբից մինչև վերջ, ապա կարող եմ համեմատել մոտավորապես հետևյալ պատկերի հետ. Ունենք ձիասայլ՝ 4 ձիերով լծված : Սայլը տեղից շարժելու համար (սկզբնական փուլ) խթանում եմ ամենախիզախ ձիուն (հենվում եմ առարկայի նկատմամբ հատուկ հետաքրքրություն և սեր ունեցող աշակերտի ոգևորության վրա) : Այնուհետև առաջնորդող է դառնում ամենադիմացկունը (գործընթացին վերաբերող մոտիվացիա ունեցող աշակերտ՝ ընթացիկ փուլ), որին օգնում է նպատակից չշեղվող ամենահաստատակամը(միջավայրով կամ այլ հանգամանքներով պայմանավորված մոտիվացիա ունեցող աշակերտ) : Իսկ երթուղու կամ ճանապարհի ընտրությունը թողնում ենք հնարամիտ խելացիին (արդյունքով պայմանավորված մոտիվացիա ունեցող սովորող): Եթե իր ձիասայլին լծված ձիերից որևէ մեկը դժվարանում է, սայլորդը խթանում է մյուսին, որպեսզի սայլը շարունակի առաջ գնալ : Նույնն էլ պետք է անի դասավանդող ուսուցիչը՝ ըստ դասարանի կազմի, ուսուցման փուլերի և նպատակների : Այս ձևով ստեղծված սիներգիան օգնում է մշտապես արթուն պահել օտար լեզու սովորելու մոտիվացիան :

Վերը նշվածից եզրահանգում ենք, որ մոտիվացիայի հարցը պետք է վերլուծվի, քննարկվի, «մշակվի» սովորողների հետ ուսուցման հենց մեկնարկային փուլում, այնուհետև, մոտիվացիայի թուլացման կամ անհետացման առաջին իսկ նշանների դեպքում՝ վերանայվի : Դա պետք է անպայման ուղեկցի սովորողների մեջ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ձևավորելու գործընթացին, առանց որի անհնարին է պատկերացնել թե՛ ուսումնառությունը, թե՛ դասավանդումը : Սովորողներն ավելի մեծ կամք կդրսևորեն՝ լծվելու ֆրանսերենի՝ 3-րդ օտար լեզվի ուսումնառությանը, եթե հասկանան դրա նպատակը, ծրագիրը, բարդությունները, եթե այդ դասերին մասնակցելը նրանց հաճույք պատճառի :

Տեսականորեն՝ լեզուն իմանալու կարիքն է պայմանավորում ուսումնառության գործընթացը և արդարացնում դրա դասավանդումը: Բայց այդ կարիքները բազմազան են, իսկ դրանց գնահատումը՝ խիստ հարաբերական: Շատ հաճախ կրթական հաստատություններն ու դասավանդողները պարտադրում են սովորողներին իրենց ընտրությունը՝ վերջիններիս կարիքները հաշվի չառնելով, կամ էլ չեն փորձում արհեստականորեն ձևավորել նման անհրաժեշտություն՝ ստեղծելով, օրինակ, հաղորդակցական իրավիճակներ: Ուսուցումը սկսելու համար անհրաժեշտ է այդ կարիքները դարձնել մոտիվացիա:

Հարկավոր է նախևառաջ տարբերակել դասավանդողի կողմից ձևակերպված կարիքները (լեզվի իմացության որոշակի մակարդակ, քննություն, թեստ...) սովորողի կողմից արտահայտված կարիքներից (առօրյա կյանքի փորձառություններ, անձնական նախագիծ-ծրագիր, համեմատություն հասակակիցների հետ և այլն): Սովորողի՝ իր իսկ կրթական կարիքների գիտակցումը շատ ավելի խթանիչ է, քանի որ սովորողը ինքն է այդ հանձնառության պատասխանատուն: Սակայն այստեղ կարող են հանդիպել նաև սուբյեկտիվ մոտեցումներ. սովորողը կարող է ինչ-որ պահի հուսալքվել, բավարարվել ունեցած մակարդակով և դոփել տեղում՝ առանց առաջընթացի:

Ֆրանսերենի դասավանդման պարագայում, ելնելով տվյալ դասարանի կամ սովորողների խմբի առանձնահատկություններից, ուսուցիչը պետք է հասկանա, թե ո՞ր դաշտում են սովորողի կարիքները. գրավո՞ր խոսքում, բանավոր խոսքում, արտասանությա՞ն մեջ, քերականությա՞ն մեջ և այլն: Այդ կարիքներն իմանալու համար կարելի է զրուցել սովորողների հետ, անցկացնել հարցախույզ կամ կազմել համապատասխան թեստ:

Այսպիսով, ուսուցիչը զննել է մոտիվացիայի հարցերը, վեր է լուծել սովորողների կարիքները, ուրեմն կարող է սկսել դասավանդումը: Եվ հենց այս պահին արտահայտվում են սովորողների սպասելիքները, գիտակցաբար թե ոչ, դասավանդումից և դասավանդողից, որին վստահում է: Ուսուցիչը պետք է ականջալուր լինի դրանց և կազմակերպի ուսուցումը դրանց հետ հաշվի նստելով: Հակառակ խորհրդային մանկավարժությունում կիրառվող «սաստել ինքնաբուխ

դրսևորումները» պրակտիկայի, հարկավոր է խրախուսել նախաձեռնությունը, որովհետև շատ հաճախ հենց դա է թույլ տալիս վեր հանել սովորողների սպասելիքները:

Իմ ոչ այնքան երկարամյա գործունեությունը հանրակրթական ավագ դպրոցում (9 տարի) թույլ է տալիս այդուհանդերձ անել որոշ ընդհանրացումներ և եզրակացություններ: Այս հարցում, օրինակ, նկատել եմ, որ սովորողների սպասելիքները ուղիղ համեմատական են նրանց մշակութային մակարդակին. Որքան այդ մակարդակը բարձր է, այնքան շատ են սպասելիքները: Նրանց արդեն հետաքրքրում է ոչ միայն լեզուն ինքը՝ գրավոր կամ բանավոր, այլ լեզվաընտանիքի հետ կապերի դրսևորումը, լեզվակիր մշակույթի առանձնահատկությունները, երկրի պատմության հայտնի դրվագներից մանրամասներ, ճիշտ կամ սխալ կարծրատիպերը և այլն: Թեմատիկ պլանները կազմելիս կարելի է հենվել այդ հետաքրքրությունները խթանող առաջադրանքների վրա և միշտ արթուն պահել մոտիվացիան:

Ցույց տվեք ինձ:

Օտար լեզվի ուսուցման մեջ ընդօրինակում-նմանակումը շատ կարևոր է: Սովորողները պետք է ընդօրինակեն դասավանդողի արտասանությունը, անգամ դեմքի արտահայտությունը, շարժումներն ու ժեստերը: Սովորողից կպահանջվի դա անել հնարավորինս հաճախ՝ համարժեքորեն մոդելավորված իրավիճակային առաջադրանքներում: Ընտրված մեթոդները ուսուցիչը հարմարեցնում է դասարանի կարիքներին: Իրականում, անգամ նմանակելու պարզագույն մեխանիզմը կիրառելիս սովորողը գործի է դնում իր ստեղծագործական միտքը:

Բացատրե՛ք ինձ:

Միայն ընդօրինակելը բավարար չէ, սովորողները կարիք ունեն խելացի բացատրությունների՝ ինչու՞ և ինչպե՞ս: Նրանք ակնկալում են ուսուցչից օգնություն, որպեսզի հասկանան, թե ինչ «դասեր» կարելի է քաղել այս կամ այն փորձառությունից, ինչպես կարելի է օգտագործել ձեռք բերած կարողությունը կամ հմտությունը ուսուցման հետագա գործընթացում: Բավական չէ թելադրել քերականական կանոնը, պետք է աշխատել բացատրել այն: Իմ պրակտիկայում ես այս խնդիրը լուծում եմ ֆրանսերենի իմացության ավելի մեծ պաշար ունեցող աշակերտների օգնությամբ՝ թույլ տալով նրանց ցուցադրել իրենց բացատրելու և գիտելիքը տեղ հասցնելու:

ուևակությունը: Հարկ եղած դեպքում անում եմ շտկումներ կամ պարզապես ուղղորդում եմ:

Թողե՛ք փորձեմ:

Նոր գիտելիքները պետք է յուրացվեն և վերածվեն հմտությունների ու կարողունակությունների: Դա է մեր նպատակը: Ուրեմն անհրաժեշտ է , որ սովորողը և՛ խոսքային, և՛ մշակութային հարթություններում փորձի կիրառել իր սովորած գիտելիքը և հմտությունները հնարավորինս հավաստի իրավիճակային առաջադրանքներում: Եվ ձեռքբերածը արմատավորելու համար սովորողին պետք է հնարավորություն տալ կիրառելու դրանք:

Թողե՛ք բացահայտեմ:

Հայտնագործության գրավչությունը հավանաբար ուսումնառության ամենակարևոր շարժառիթն է, որովհետև բացահայտում է անհայտը: Օտար լեզվի և օտար մշակույթի ուսուցումը մենաշնորհ է, որովհետև հնարավորություն է ընձեռում սովորողին բացահայտել այդ օտարը և ինքն իրեն: Դասավանդողին մնում է ընդամենը թույլ տալ, որ սովորողը զբաղվի իր սեփական հետազոտություններով: Բազմաթիվ առաջադրանքների տեսակներ կան, որոնք հնարավորություն են տալիս առաջ գնալ անհայտի հետևից: Այդպես կարելի է կազմակերպել կամ ավելի խորացնել, օրինակ, ֆրանկոֆոն աշխարհի բացահայտումը:

Թողե՛ք ստեղծագործեմ (հորինեմ):

Ֆրանսերենը լատիներենի արժանի ժառանգորդն է՝ իր կառուցվածքով և երկաթյա կարգապահությամբ: Իմ դասերի ժամանակ հաճախ եմ ասում՝ ինքնագործունեությունը չի խրախուսվում, նկատի ունենալով, իհարկե, որ պետք է հիշել կանոնը սովորողի համար և կիրառել: Սակայն չի կարելի զսպաշապիկ հագնել սովորողին, ինտերակտիվ մեթոդների օգտագործման շնորհիվ կարելի է ազատություն տալ նրան, խրախուսել ուսումնասիրվող լեզվով արված ինքնաբուխ արտահայտությունները, որովհետև այդ ճանապարհով նա կտեսնի կանոնի կիրառման դեպքերը, գործի կոնկրետ ներմբռնման (ինտուիցիա) մեխանիզմները և երևակայությունը, կձևավորի կարողունակություններ: Լեզվի և մշակույթի մեջ շատ երևույթներ համակարգին, նորմերին ու կանոններին չեն ենթարկվում և դրանով իսկ լայն տեղ են թողնում ստեղծագործական մտքի թռիչքի համար: Նույնիսկ եթե սովորողը պարզապես կադապարային ձևով պրոյեկտում է մայրենի լեզվի կառույցը և կիրառում դա ֆրանսերենում, պետք չէ իսկույն փնտրել սխալը, երբեմն կարելի է անտեսել:

Վերը նշված մոտեցումներից յուրաքանչյուրը հզոր խթանիչ գործոն է ուսուցման և դասավանդման համար, իսկ նրանց ամբողջությունը՝ մանկավարժական ցանկացած ծրագրի գործիքակազմ:

Ակտիվ սպասելիքներ՝ բացահայտում, փորձարարություն, ստեղծագործում

Պասիվ սպասելիքներ՝ բացատրություն, ընդօրինակում, գնահատում

Դասավանդման մեթոդների ընտրության իդեալական տեսլականում պետք է ձգտել հավասարակշռության այս 2 խմբերի միջև, սակայն գործնականում, իհարկե, առավելությունը տրվում է երկրորդ խմբին՝ ավելի քիչ տեղ հատկացնելով ստեղծագործականին:

Այսպիսով, ուսուցչի կողմից մոտիվացիան խթանելու նպատակով արված ջանքերը զլորբալ առումով ուղղված են դրա պատճառները բացահայտելուն և, սովորողների սպասելիքների բազմակողմանի վերլուծությունից հետո, դասավանդման ՃԻՇՏ մեթոդները ընտրելուն: ՃԻՇՏ –ն այստեղ ամփոփում է համարժեք, ժամանակակից, արդյունավետ և նման այլ բնորոշումները:

Բայց չէ՞ որ մեր նպատակներին հասնելը միայն ուսուցչի կամ սովորողների խնդիրը չէ: Այն մեծ հաշվով հենց ողջ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ խնդիրն է: Ուրեմն մյուս մասնակիցներն էլ անելիքներ ունեն: Իմ խորը համոզմամբ՝ համակարգային և կառուցվածքային: Այս աշխատանքի ձևաչափով սահմանափակվելով, չեմ հավակնում պնդելու, թե խորը ուսումնասիրություններ եմ արել, սակայն որոշ պնդումներ, այդուհանդերձ, կարող եմ ինձ թույլ տալ անելու:

▲▲▲ Այս կետը նախապայմանն է: անխուսափելիորեն անհրաժեշտ հրամայականը. **ԴԱՍԱՐԱՆՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԿԻՍՎԵՆ:** Այլապես լեզվի ուսուցման որակի մասին խոսելը դեմագոգիայի դիդակտիկ կյուբ է:

ՊՆԴՈՒՄ 1-ին.- 3-րդ օտար լեզու ձևակերպումն արդեն որոշակիորեն հեռացնում է առարկան դպրոցում դասավանդվող մյուս առարկաներից. 3-րդ, այսինքն, մի տեսակ, «ավելորդ», որովհետև կարևորները միշտ առաջինն ու երկրորդն են: Օտար, ասել է թե՛ յուրային չէ: Լեզվահոգեբանները երկար ժամանակ է, ինչ նման հարցեր են քննարկում: Առաջարկվում է, օրինակ, A,B,C լեզուներ տարբերակը: Թողնենք դա մասնագետներին: Արդեն հենց այդ անտեսանելի, բայց գոյություն ունեցող նախապաշարումները հաղթահարելու համար այս լեզվի դասավանդումը պետք է ԼՐԱՑՈՒՑԻՉ հոգածությամբ կազմակերպվի:

ՊՆԴՈՒՄ 2-րդ.- 3-րդ օտար լեզվի դասավանդումը համարժեք է ներդրումային նախագծին՝ ներ ես դնում միջոցներ և ակնկալում ես արդյունք: Օրինակ, աշխարհահռչակ ջութակահար ՅԵՅՈՒԴԻ ՄԵՆՈՒՅԻՆԻ կարիերան ամբողջովին իր մոր ՓԱՅԼՈՒՆ ներդրումային ծրագրի արգասիքն է: Առանց ֆինանսական և կազմակերպչական լուրջ նախապատրաստական հենքի՝ դժվար է լինելու:

ՊՆԴՈՒՄ 3-րդ.- Վերը նշված պնդումներից ելնելով, նախքան ուսուցումը որպես պարտադիր առարկա դպրոցի ծրագրում ներառելը, ԿԱՏԵԳՈՐԻԿ հրամայական է բացատրական աշխատանք տանել ծնողների, և, թույլ տվեք անկեղծ լինել, մնացած

առարկաների ուսուցիչների հետ, որոնց էլ, ցավոք, հարկ է ՅԱՄՈՁԵԼ դրա արդիական պահանջ լինելու մեջ: Բախվել եմ նման խնդրի:

ՊՆԴՈԻՄ 4-րդ.- Ստեղծել ՆՈՐ դասագիրք արհեստավարժ մասնագետների հեղինակությամբ, նոր շափորոշչային պահանջներին համապատասխան, գրված հատկապես Հայաստանում ապրող սովորողին ֆրանսերեն սովորեցնելու համար (այսինքն, օրինակ, ազգության մասին խոսելիս պարտադիր չէշտել՝ որտեղի՞ց ես գալիս ձևը, որովհետև արտասահմանյան մեթոդները նախատեսված են Ֆրանսիա ներգաղթած օտարերկրացիներին ֆրանսերեն սովորեցնելու համար; խուսափել նման շատ այլ անհասկանալի և ոչ տիպական իրավիճակային անհեթեթություններից:)

ՊՆԴՈԻՄ 5-րդ.- Ֆրանսերենի՝ որպես 3-րդ օտար լեզվի ուսուցումը վարել տեխնիկապես հագեցած կաբինետում՝ դրա համար նախատեսելով անհրաժեշտ ֆինանսական միջոցներ: Չուտ այդ փաստը կարող է իր գրավչությամբ խթանել այդ լեզուն սովորելու ցանկությունը և դառնալ հենց այն շարժիչ ուժը, որը մեզ պետք է արդյունքի հասնելու համար: Որովհետև միայն նվիրյալ ուսուցչով 21-րդ դարում դասավանդման գործը հնարավոր չէ հաջողել:

Ե Չ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Իմ հետազոտական աշխատանքի թեման իսկապես այն հարցի վերլուծությունն է, որն ամենից շատ է խանգարում աշխատանքիցս բավարարված լինելուն: Եվ ես դրա մասին մտածել եմ անկախ վերապատրաստման շրջանակներում այս խնդրի ուսումնասիրությունը անելու պահանջից: Ինձ համար մասնավորապես սովորողների անտարբերությունը հասկանալի չէր, որովհետև իմ ֆրանսերենը մասնագիտությունս դարձնելու ցանկությունս ձևավորվել է խորհրդային միջնակարգ դպրոցի 7-րդ դասարանում, այսինքն լեզվի հետ իմ ծանոթությունից 2 տարի հետո ընդամենը: Ինչու՞ ֆրանսերենի նման չքնադ, մեղեդային լեզուն չի ձգում մեր սովորողներին, ինչու՞ նրանք չեն ուզում օգտվել այս ոչ ամեն դպրոցում իրենց առաջարկվող հնարավորությունից՝ սովորել ևս մի լեզու, այն էլ՝ անվճար, այն էլ՝ քաղաքական տեսակետից կարևորությամբ 2-րդը աշխարհում, այն էլ մի երկրում, որը պատիվ է ունեցել իր մայրաքաղաքում անցկացնելու Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթաժողովը... և այսպես 1001 ինչու:

Պատճառները, ինչպես հասկանալի է դառնում խնդրի ուսումնասիրությունից, միայն մասամբ են վերաբերում ֆրանսերենին, և ավելի շուտ դրանք առհասարակ տեխնոլոգիաների կատաղի վազքի դարում կրթությանը նետված մարտահրավերներ են: Դպրոցը պետք է «վերամտածվի»: Ցանկանում էի գրել՝ վերանայվի, բայց դա բավարար չէ: Ոչինչ առաջվանը չէ, հաստատուն ոչինչ չկա՝ փոփոխությունից բացի: Մենք լավ չենք պատկերացնում սովորողների կարիքները և սպասելիքները, չենք հասցնում կիրառել մեր մեթոդները այս կամ այն կրթական խնդրի լուծման համար, որովհետև կամ խնդիրն է արդեն հնացել, կամ մեթոդը:

Իմ աշխատանքում փորձել եմ հենվել ինձ հանդիպած դեպքերի վրա, ընդհանրացումներ եմ արել իմ առարկայի վերաբերյալ, սակայն բացահայտել եմ, որ հաճախ և՛ խնդիրներն են ընդհանուր, և՛ պահանջվող մոտեցումները:

Եզրակացությունս հետևյալն է. սովորելու մոտիվացիան չի կորել: Այն թաքնվել է մեր խելակորույս առաջ սլացող ժամանակների ամեն վայրկյան փոխվող պատկերներում, որոնք տեսնելու համար յուրաքանչյուրն իր բանալին ունի: Եվ մինչդեռ ձեր սանը տատանվում է, ցոլյց տվեք նրան գանձերը բանալու անցքից, արթնացրե՛ք նրա մեջ դրանց տիրանալու ցանկությունը, ապա թողե՛ք նրան ազատ, որ գտնի իր դուռն ու դրա բանալին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Jean-Marc Defays, Sarah Deltour - *Le français langue étrangère et seconde*, -Mardaga 2003, CAIRN INTERNATIONAL EDITION

2. **Révolution numérique : 4 défis pour l'éducation** Knowledge **one**
(25/07/22)

<https://knowledgeone.ca/4-challenges-for-education-in-the-digital-revolution-era/?lang=fr>

3. **Հանրակրթական պետական չափորոշիչներ:**

http://escs.am/am/news/6718?fbclid=IwAR3b63uqWDY3Z9noFYwhI7DbQWoFnLbAXSkx6O80QcrIDg32hK_Bb2INHjl (27/07/22)